



Մամլո Հաղորդագրությունում



Հուլիսի 3 2019 թ.

Միրելի հեծանվորդներ, ուզում ենք հիշեցնել, որ <<Հեծանվային Փառատոնը>> տեղի է ունենալու 09.22. 2019 ին:

Վաղ առավոտից հավաքվելու ենք լավ, ակտիվ, առողջ ու հետաքրքիր օր ունենալու համար:

<<Հեծանվային Փառատոնը>> սկսվելու է ժամը 9:30- ին:

Մեկնարկը և վերջնակետը լինելու է Հյուսիսային պողոտան:

Շրժվելու ենք դեպի Աբովյան փողոց, այնուհետև շրջապատյալ ենք անելու Հանրապետության Հրապարակում, շարունակելու ենք դեպի Վազգեն Սարգսյանի փողոց, հետո դեպի Բեյրութի փողոց, այնտեղից էլ Արգիշտի փողոցով(քաղաքապետարանի առջևով) շարժվելու ենք դեպի Հաղթանակի կամուրջ, կամուրջից պտտվելու ենք դեպի Իսակովի պողոտա և շարունակելու ենք մինչև Արգավանդի խաչմերուկ:

Նախատեսված է 3 վերադարձի կետ՝ ըստ հեծանվորդի ցանկության:

- ✓ Առաջին վերադարձի կետ - Ամերիկյան դեսպանատան խաչմերուկ
- ✓ Երկրորդ վերադարձի կետ - Երևանյան լիճ
- ✓ Երրորդ վերադարձի կետ - Արգավանդի խաչմերուկ

Եվս մեկ անգամ հիշեցնում ենք, որ ամբողջ փառատոնի ընթացքին մեր մասնակիցներին ուղեկցելու են պրոֆեսիոնալ հեծանվորդները, լինելու է ոստիկանության հսկողություն, շտապօգնության հերթապահություն:

<<Հեծանվային Փառատոնին>> կարող են մասնակցել բոլորը . պարզապես պետք է արձանագրվել: Մասնակցությունը անվճար է և չունի ոչ մի տարիքային սահմանափակում:

Հետևե՛ք մեր էջին՝ հավելյալ մանրամասնությունների համար...

Հարգանքով

✓ Bikeathon Armenia

